Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 30-ի N 1518-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ 2026 թվականի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1518-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետությունից մի շարք ապրանքների՝ դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» N 1518-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետի 1-ին ենթակետում «7308 » թվից հետո լրացնել «, 7402» թվով։

2. Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում կատարել հետևյալ լրացումները՝

1) «3-րդ ենթակետով սահմանված ապրանքներից» բառերից հետո լրացնել «(բացառությամբ ԱՏԳ ԱԱ 8549 ծածկագրին դասվող ապրանքների)» բառերով,

2) ««Ժամանակավոր արտահանում» ընթացակարգով արտահանվող և հետագայում ներմուծվող,» բառերից հետո լրացնել «ԱՏԳ ԱԱ 7307 ծածկագրին դասվող՝ խողովակների կամ փողակների համար սև մետաղից չօգտագործված

կցամասերի,» բառերով։

3) «7204» թվից հետո լրացնել «,7402» թվով։

3. Որոշման 1-ին կետով սահմանված արգելքը չի տարածվում մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը արտահանման նպատակով ձևակերպված, սակայն չարտահանված սույն Որոշման 1-ին կետում նշված ապրանքների վրա։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում **պաշտոնական** հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն.Փաշինյան